ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է
ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից
25.02.2026 թ., արձ. թիվ 9

Վավերացնում եմ
Ռեկտոր
Հ. Զաքոյան
25 02 2026 թ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2026

1. Նշանակություն և կիրառման ոլորտ

Սույն ընթացակարգը սահմանում է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ ՀԱԱՀ) միջազգային փոխանակման ծրագրերի շրջանակներում սովորողների (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա՝ ասպիրանտ/հայցորդ) և աշխատակիցների (պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմ) ընտրության, մրցույթների կազմակերպման և անցկացման կարգը: Փոխանակումն իրականացվում է փոխանակման ծրագրերով համագործակցող կամ երկկողմանի պայմանագրեր ունեցող բարձրագույն ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ բուհերի) կամ այլ կազմակերպությունների հետ:

2. Փաստաթղթային հենք

2.1 Erasmus+ ծրագրի ուղեցույց:

2.2 Էրազմուս+ ուսանողական կանոնադրություն (Erasmus+ Student Charter):

2.3 ՀՀ կառավարության համապատասխան որոշումներ:

2.4 ՀԱԱՀ ռազմավարական ծրագիր:

2.5 Միջազգային կապերի դեպարտամենտի (այսուհետ՝ ՄԿԴ) կանոնադրություն:

2.6 Արտաքին կապերի և միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն, ընթացակարգեր:

2.7 Միջազգային կրեդիտային շարժունության արդյունքների փոխճանաչման ընթացակարգ:

2.8 Համալսարանի գործունեության պլանավորման, կառավարման և մշտադիտարկման քաղաքականություն:

3. Մրցույթ հայտարարելու կարգը

3.1 Համապատասխան պայմանագրի և փոխանակման ծրագրի առկայության դեպքում ՄԿԴ-ն շարժունության սկզբից առնվազն 2 ամիս առաջ հայտարարում է մրցույթ (հրատապ դեպքերում այդ ժամկետը կարող է փոփոխվել՝ հատկապես անձնակազմի շարժունության դեպքերում):

3.2 Մրցույթ կարող է չհրապարակվել այն դեպքում, եթե շարժունությունը վերաբերում է միջազգային շաբաթին մասնակցելուն (կարգավորվում է սույն ընթացակարգի 5.4 կետով):

3.3 Մրցույթի հայտարարությունը պետք է պարունակի.

ա) փոխանակման ծրագրի և համագործակցող բուհի անվանումը և պաշտոնական կայքը, համապատասխան հղումներ և այլ տեղեկություններ,

բ) առկա տեղերի քանակը (հայտնի լինելու դեպքում), շարժունության տևողությունը, ֆինանսավորման, անհրաժեշտության դեպքում՝ վիզա ստանալու ընթացակարգի վերաբերյալ տեղեկություն,

գ) անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,

դ) դիմելու վերջնաժամկետը և ընտրության ձևաչափը,

ե) ծրագրի համակարգողի կոնտակտային տվյալները:

3.4 Մրցույթի հայտարարությունը տեղադրվում է ՀԱԱՀ պաշտոնական կայքում, ՀԱԱՀ և Միջազգային կապերի դեպարտամենտի սոցիալական ցանցերի պաշտոնական

էջերում, հնարավորության դեպքում, տարածվում է էլեկտրոնային փոստի հասցեների բազայով, ինչպես նաև տեղեկության տարածման այլ միջոցներով:

4. Մրցույթին մասնակցելու կարգը

4.1 Մասնակիցը սահմանված ժամկետում ծրագրի համակարգողին պետք է ներկայացնի հայտարարությունում նշված պահանջներին համապատասխանող փաստաթղթերի ամբողջական փաթեթը էլեկտրոնային և թղթային տարբերակներով:

4.2 Մոտիվացիոն նամակը (motivation letter) կամ դրան փոխարինող այլ փաստաթուղթը պետք է պարունակի տեղեկություններ ծրագրին մասնակցելու կարևորության և/կամ անհրաժեշտության վերաբերյալ և ստորագրված լինի դիմորդի և իր անմիջական ղեկավարի կողմից: Վերջինս, չստորագրելու դեպքում, պետք է ներկայացնի կարծիք՝ հիմնավորելով իր անհամաձայնությունը: Անմիջական ղեկավարի կարծիքի վերաբերյալ դիմողը իրավունք ունի ներկայացնել գրավոր բողոք՝ իրենց ստորաբաժանման գործունեությունը համակարգով ՀԱԱՀ պրոռեկտորին, որն էլ, ռեկտորի հետ քննարկելուց հետո, կայացնում է դիմորդի մրցույթին մասնակցելու թույլատրելու կամ չթույլատրելու մասին վերջնական որոշում:

4.3 Անհրաժեշտ փաստաթղթերի հանձնումից հետո և դրանց համապատասխանության դեպքում, հարցազրույցով անցկացվող մրցույթի դեպքում, ծրագրի համակարգողի կողմից բոլոր դիմորդները ստանում են ծանուցում մրցույթի անցկացման վերաբերյալ:

4.4 Հարցազրույցով անցկացվող մրցույթների դեպքում դիմորդները պարտավոր են նշանակված օրը ներկայանալ հարցազրույցի/մրցույթի: Չներկայացած դիմորդները դուրս են մնում մրցույթից:

4.5 Մրցույթին կարող են մասնակցել ծրագրին համապատասխանող մասնագիտությունների առաջին կուրսը հաջողությամբ ավարտած ուսանողները, ինչպես նաև այն ուսանողները, որոնց ենթադրյալ մեկնումը արտերկիր չի համընկնում նրանց ուսումնառության վերջին կիսամյակին:

4.6 Ուսումնական աշխատանքները համակարգող պրոռեկտորի որոշմամբ, ուսումնառության վերջին կիսամյակի ընթացքում ուսանողին կարող է թույլատրվել մասնակցելու միայն կարճաժամկետ շարժունության ծրագրի մրցույթին, եթե հաղթելու դեպքում ուսանողը հնարավորություն ունենա առանց ընդհատման շարունակել և ավարտել իր ուսումը ՀԱԱՀ-ում:

5. Մրցույթի անցկացնելու կարգը

5.1 Մրցույթներ անցկացնելու նպատակով մեկ տարի գործունեության ժամկետով ՀԱԱՀ ռեկտորի հրամանով ձևավորվում է մրցութային հանձնաժողով, որի կազմն, ըստ անհրաժեշտության, տարվա ընթացքում կարող է փոփոխվել ռեկտորի հրամաններով: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝

ա) Միջազգային կապերի և կրթական բարեփոխումների գծով պրոռեկտորը (այսուհետ՝ ՄԿԿԲ գծով պրոռեկտոր),

բ) ՄԿԴ-ի պետը,

գ) ՄԿԴ-ի այլ աշխատակից կամ աշխատակիցներ,

դ) օտար լեզվի մասնագետը (ՀԱԱՀ լեզվի կենտրոնից կամ համապատասխան ամբիոնից),

ե) կախված մրցույթի առանձնահատկություններից՝ ուսումնական կամ գիտական աշխատանքների գծով պրոռեկտորը և ՀԱԱՀ այլ աշխատակիցներ:

5.2 Որոշ դեպքերում (մեկ դիմորդի առկայություն, մրցակցության բացակայություն, հրատապ դեպք, երբ արդյունքների մասին պետք է շտապ հայտնել ընդունող համալսարանին) մրցույթը կարող է իրականացվել հանձնաժողովի նեղ կազմով՝ ՄԿԿԲ գծով պրոռեկտորի, ՄԿԴ պետի և օտար լեզվի մասնագետի մասնակցությամբ:

5.3 Հանձնաժողովը կատարում է թեկնածուների վարկանիշային միավորների բաշխում, որից հետո մրցույթի պահանջները բավարարող դիմորդի/դիմորդների հավաքած վարկանիշային միավորների արդյունքերի և դրանց ամփոփման մասով գրավոր եզրակացություն է ներկայացնում ՀԱԱՀ ռեկտորին: ՀԱԱՀ ռեկտորի համաձայնությունը ստանալուց հետո, ՀԱԱՀ ՄԿԴ-ի միջոցով մրցույթի վերջնական արդյունքներն ուղարկվում են ընդունող բուհի տվյալ ծրագրի պատասխանատու ստորաբաժանում՝ վերջնական հաստատում ստանալու համար:

5.4 Միջազգային շաբաթի մասնակցելու հնարավորության մասին ՀԱԱՀ ՄԴԿ պետը, ՀԱԱՀ ՄԿԿԲ գծով պրոռեկտորի միջոցով, տեղեկացնում է ՀԱԱՀ ռեկտորին, որը որոշում է կայացվում ՀԱԱՀ կողմից միջազգային շաբաթի մասնակցի կամ մասնակիցների վերաբերյալ:

5.5 Մրցութային հանձնաժողովի անդամները պետք է.

ա) ստուգեն և գնահատեն ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը,

բ) տան համապատասխան եզրակացություն,

գ) կախված մրցույթի տեսակից՝ անցկացնեն բանավոր հարցազրույց կամ գնահատեն ըստ ներկայացված փաստաթղթերի՝ գնահատելով մասնակցի հմտությունները, լեզվի իմացությունը, մասնակցության շարժառիթը և այլն,

դ) ամփոփեն և ներկայացնեն ընտրության արդյունքները:

5.6 Որոշ դեպքերում մրցույթը կարող է իրականացվել առանց բանավոր հարցազրույցի: Այդ դեպքում հանձնաժողովը առցանց կամ դեմ առ դեմ հանդիպման ձևաչափով կատարում է մասնակիցների վարկանիշային միավորների բաշխում, որից հետո մրցույթի պահանջները բավարարող դիմորդի/դիմորդների վերաբերյալ գրավոր եզրակացություն է ներկայացվում ՀԱԱՀ ռեկտորին՝ նշելով յուրաքանչյուր դիմորդի հավաքած միավորը:

5.7 Այլ հավասար պայմանների դեպքում մրցույթում առավելություն է տրվում այն ուսանողին կամ աշխատակցին, ով մինչ այդ կամ չի մասնակցել շարժունության ծրագրի կամ մասնակցել է ավելի վաղ:

5.8 Մրցույթին իրավունք ունեն մասնակցելու այն ուսանողները, որոնք տվյալ պահին նմանատիպ այլ փոխանակման ծրագրի կրթաթոշակակիր չեն, բացառությամբ այն դեպքերի, եթե լինում են թափուր տեղեր:

5.9 Անկախ գնահատման մյուս գործոնների միավորների քանակից, երաշխավորվել կարող են միայն այն դիմորդները, ովքեր 0-20 միավորանոց համակարգով օտար լեզվից հավաքել են նվազագույնը 13 միավոր:

6. Մրցույթի արդյունքների հրապարակումը և բողոքարկման կարգը.

6.1 Մրցույթի վերջնական արդյունքները ստանալուց հետո ՀԱԱՀ-ում ծրագրի համակարգողը էլեկտրոնային նամակով ծանուցում է բոլոր դիմորդներին:

6.2 Մրցույթի արդյունքների հրապարակումից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում դիմորդները կարող են բողոքարկել արդյունքները՝ ներկայացնելով համապատասխան գրավոր դիմում ՀԱԱՀ ռեկտորին:

6.3 Բողոք-դիմումի առկայության դեպքում ՀԱԱՀ ռեկտորը 3 աշխատանքային օրվա ընթացքում հրավիրում է նիստ՝ Հանձնաժողովի անդամների, մրցույթի արդյունքները բողոքարկող դիմորդի, ինչպես նաև ռեկտորի որոշմամբ ՀԱԱՀ այլ աշխատակիցների մասնակցությամբ: Նիստի ընթացքում կայացվում է վերջնական որոշում՝ հիմք ընդունելով.

ա) դիմորդի փաստաթղթերը,

բ) մրցույթի ձայնագրությունը,

գ) նիստի ընթացքում հնչած հարցադրումներն ու դրանց վերաբերյալ ներկայացված պարզաբանումները:

7. Գործուղման / մեկնելու հետ կապված ՀԱԱՀ ՄԿԴ-ի գործունեությունը

7.1 Գործուղումից/մեկնելուց առաջ ՀԱԱՀ ՄԿԴ-ում տվյալ ծրագրի համակարգողը ընտրված թեկնածուին տրամադրում է մեկնելու նախապատրաստման հետ կապված համակողմանի օժանդակություն:

7.2 Գործուղման / մեկնելու դիմումը ներկայացվում է ՀԱԱՀ ռեկտորին մեկնողի անմիջական ղեկավարի տեղեկացված լինելը հավաստող ստորագրությամբ:

7.3 Հաշվետվություն ներկայացնելու կարգը

Միջազգային փոխանակման ծրագրով գործուղման/մեկնման ավարտից հետո շարժունության մասնակիցը պարտավորվում է լրացնել Եվրոպական հանձնաժողովի կողմից ուղարկվող «Մասնակցի հաշվետվությունը», ՄԿԴ ներկայացնել սահմանված ձևաչափով գրավոր հաշվետվություն և/կամ հոդված, լրացնել առցանց գնահատման թերթիկը, ինչպես նաև ստացված արդյունքների մասին զեկուցմամբ հանդես գալ ՀԱԱՀ կամ ֆակուլտետային գիտական խորհրդի նիստերին, պետք է ներկայացնի ներդրման հաշվետվությունն ամբիոնի վարիչին և ՈԳԱԿ-ին, որն էլ հետագայում հիմք է հանդիսանալու գործընթացի արդյունավետության գնահատման և աշխատակցի վարկանիշավորման համար:

8. Ժամանող ուսանողների / աշխատակիցների մրցույթի անցկացման կարգը

8.1 Ժամանող ուսանողների/աշխատակիցների համար մրցույթը կազմակերպվում և անցկացվում է ուղարկող բուհի կողմից՝ համաձայն ներքին կանոնակարգի, որը պետք է հաստատվի ՀԱԱՀ-ի կողմից:

8.2 Համատեղ մրցույթների անցկացման դեպքում առցանց հարցազրույցին մասնակցում են ՄԿԿԲ գծով պրոռեկտորը, ՄԿԴ պետը, ծրագրի համակարգողը, այն ստորաբաժանման ներկայացուցիչը, որտեղ նախատեսվում է անցկացնել ուսուցումը, կամ դասավանդումը/վերապատրաստումը, անհրաժեշտության դեպքում նաև՝ այլ ներկայացուցիչներ:

8.3 ՀԱԱՀ ծրագրի համակարգողը պետք է պատշաճ աջակցություն ցուցաբերի ժամանող ուսանողներին/աշխատակիցներին, կազմակերպի ուսումնառության/այցելության ողջ ընթացքը, ուսանողների համար ապահովի համապատասխան դասընթացների

կազմակերպումը, անցկացումը և ուսանողի մասնակցությունը, իսկ ծրագրի ավարտին պետք է տրամադրի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

8.4 Ժամանող ուսանողները/աշխատակիցները ուսումնառության/այցելության ավարտին պետք է լրացնեն Եվրոպական հանձնաժողովի կողմից ուղարկվող «Մասնակցի հաշվետվությունը», ՄԿԴ ներկայացնեն հաշվետվություն և լրացնեն առցանց գնահատման թերթիկը: